# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ N 116-Ա

<<26>> սեպտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.976224 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 75-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի N 02.1//08679-2024 գրությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի 75-Ա որոշման վերաբերյալ ներկայացված առարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով **0.976224** հեկտար հողամասն (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս, Վկայական N 16092024-08-0044) օտարել աճուրդով՝ այդ հողամասում հանքակոպճի և քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու համար:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասն աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին >> N 75-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | կողմ՝ 11 | դեմ՝ 0 | ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | | | |
| **Ե. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ե. ՈՒՌՈՒՏՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ա. ՇԱՌՈՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Մ. ԵՆՈՔՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |
| **Մ. ԱՍԼԱՆՅԱՆ** | ------------- | ------------- | ------------- |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<26>> սեպտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2024 թվականի
սեպտեմբերի 26-ի թիվ 116-Ա որոշման

**Աճուրդով օտարվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝**

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, Վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%) | Աճուրդի մասնակցի գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս | 08-013-0101-0004 N 16092024-08-0044 | 0.976224 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | Արդյունաբերական օբյեկտների | Հանքակոպճի և քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու համար | Չկան | Աճուրդ | 1 420 000 | 200.0 | 2 772 480 | 50.0 | 5.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ